ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐ

ՀՐԱՄԱՆ

ք.Երևան «08» 09 2015թ. N՝ 1267-Ա

«ՏՈՆՈՒՍ-ԼԵՍ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՄԻ ՇԱՐՔ ԵԱՏՄ (ՄՄ) ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳԵՐԻ ՊԱՀԱՆՋՆԵՐԻՆ ՈՐՊԵՍ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ՍԵՐՏԻՖԻԿԱՑՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԱՐՄԻՆ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Տեխնիկական կանոնակարգման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետը, 20-րդ հոդվածի 2-րդ մասը, հաշվի առնելով նույն օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 25-րդ կետը և Հայաստանի Հանրապետության կառավարության 2013 թվականի հունիսի 13-ի N 623-Ն որոշման 1-ին կետով հաստատված հավելվածի 24-րդ կետը.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. «Տոնուս-Լես» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը նշանակել որպես արտադրանքի սերտիֆիկացում իրականացնող համապատասխանության գնահատման գործունեության մարմնին՝ սույն հրամանի հավելվածում նշված ԵԱՏՄ(ՄՄ) տեխնիկական կանոնակարգերի պահանջներին համաձայն:

2. «Տոնուս-Լես» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը նշանակել մինչև 2017 թվականի դեկտեմբերի 8-ը ժամկետով, տրամադրել նշանակման վկայական և շնորհել նույնականացնող համար՝ Ն-16(Հ-16)2015

3. Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարի 2013 թվականի սեպտեմբերի 3-ի թիվ 801-Ա հրամանով հաստատված կարգով «Տոնուս-Լես» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը գրանցել համապատասխանության գնահատման նշանակված մարմինների գրանցամատյանում:

4. Սույն հրամանի կատարման հսկողությունը վերապահել Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարի տեղակալ Գ. Բաղալյանին:

ԿԱՐԵՆ ՃՇՄԱՐԻՏՅԱՆ